ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ՝ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅԵԼԻ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

Անցյալ տարվա եզրագծին, Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոն 9 645 500 լարի գումարով հաստատեց մունիցիպալիտետի 2020 թվականի բյուջեն: Վերոնշյալ գումարը 423291 լարիով գերազանցում է 2019 թվականի բյուջեն (այն ժամանակ դա կազմում էր 9 222 209 լարի):

9 645 500 լարի գումարով սահմանված 2020 թվականի բյուջեում 535 500 լարի կազմում են եկամուտները, գումարած՝ ֆինանսական ակտիվները: Բյուջեի շուրջ 68 տոկոսը ծախսվելու է տեղական կազմակերպությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների պահպանման վրա: Ախալքալաքիի տեղական բյուջեն սուբսիդավորելու է մունիցիպալ հաստատությունները՝ դրա համար հատկացնելով 2 972 232 լարի: Ծախսերը ներառում են այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են լրատվամիջոցների համար հատկացված գումարը՝ 31 000 լարի, եկեղեցիների էլեկտրաէներգիան՝ 15 000 լարի, եկեղեցիների ջեռուցումը (հայկական եւ վրացական եկեղեցի՝ 7 500-ական լարի, Բարալեթի, Արագվա, Դիլիսկա՝ 3000 լարի, Տուրցխ՝ 1000 լարի): Այլ ծախսերի վրա ծախսվող գումարը 89 100 լարի է: Ենթակառուցվածքային աշխատանքների համար տեղական բյուջեն կվճարի 2 306 238 լարի: Մշակութային միջոցառումների եւ մարզական ծրագրերի համար՝ 178 000 լարի, սոցիալական ծրագրի համար՝ 808 000 լարի եւ պահուստային ֆոնդ: Պահուստային ֆոնդի չափը չի փոխվել, ինչպես անցած տարի, այնպես էլ՝ 2020 թվականին այն 152 000 լարի է:

2020 թվականին տեղական բյուջեում տնտեսության եւ ենթակառուցվածքների համար հատկացված գումարը 3 027 516 6 լարիով նվազել է: Այս տարի այդ գումարը կազմում է 5 333 754 6 լարի, հաջորդ տարի կլինի 2 306 228 լարի:

Մարզական, երիտասարդական եւ մշակութային ծրագրերի ֆինանսավորումը նվազել է 43 005 լարիով:

Ծախսերը այլ կազմակերպություններում եւ ծառայություններում քիչ եւ կամ ընդհանրապես չեն փոփոխվել:

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

Տարվա եզրագծին 6 936 000 լարի գումարով Նինոծմինդայի մունիցիպալիտետի 2020 թվականի բյուջեն հաստատեց նաեւ տեղի մունիցիպալիտետի սակրեբուլոն: Ընդորում, բյուջեի բաշխումը ծրագրված է հետեւյալ կերպ՝ 576 000 լարի՝ սակրեբուլոյի գործունեության, իսկ 1 582 200 լարի՝ քաղաքապետարանի համար: Պահուստային ֆոնդը կազմում է 100 000 լարի, մունիցիպալ զարգացման ֆոնդը՝ 78.300 լարի:

Ենթակառույցների զարգացմանը հատկացվելու է 2 136 500 լարի: Այդ գումարից 150 000 լարի հատկացվելու է մունիցիպալ ճանապարհների ձնամաքրման աշխատանքների, 63 000 լարի՝ գյուղական ճանապարհների վերանորոգման, 4000 լարի՝ Նինոծմինդա քաղաքի գիշերային լուսավորության բարելավման, 70 000 լարի՝ Նինոծմինդա քաղաքում տեսախցիկների տեղադրման, 50 000 լարի՝ Նինոծմինդա քաղաքում կոյուղու ցանցի անցկացման, 50 000 լարի՝ Նինոծմինդա քաղաքի եւ Գորելովկա գյուղի ջրամատակարարման համակարգի վերանորոգման համար: Եվս 195 000 լարի կտրամադրվի 17 գյուղերում եւ Նինոծմինդա քաղաքում գիշերային լուսավորության լամպերի թվի ավելացման համար: 120 հազար լարի նախատեսվել է որպես գիշերային լուսավորության վարձավճար գյուղերի եւ Նինոծմինդա քաղաքի համար:

Ենթակառույցների զարգացման ուղղությամբ նախատեսված է նաեւ բազմաբնակարանային բարձրահարկ շենքերի բակերի ասֆալտապատում, գյուղերում արարողությունների տների, մարզադահլիճների, մշակույթի կենտրոնների եւ մինի մարզադաշտերի կառուցում, առանձին գյուղերում մշակութային տների, արարողությունների տների, մանկապարտեզների վերանորոգում, ոռոգման համակարգերի կարգավորում:

Բյուջեից 110 000 լարի է հատկացվում մունիցիպալիտետի տարածքում մարզական միջոցառումների անցկացման համար եւ այլն:

Ավանդական միջոցառումների անցկացմանը հատկացվելու է 26 000 լարի:

Բյուջեում նախատեսված են նաեւ գումարներ սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնության տրամադրման, վիրահատությունների եւ դեղորայքի ձեռքբերման, սահմանափակ հնարավորություններով անձանց օգնելու, նորածիններին նպաստներ հատկացնելու, բազմազավակ ընտանիքներին օգնելու, անապահովներին վառելանյութով ապահովելու, սոցիալապես անապահով ընտանիքներին միանվագ օգնության, վետերանների ընտանիքներին օգնելու համար:

ԿՐԹԱԿԱՆ

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կրթության բարեփոխման շրջանակներում 2020 թվականի դիմորդները Միասնական ազգային քննությունները կհանձնեն նոր մոդելով:

Քննությունները կանցկացվեն 3 պարտադիր առարկաներից.

1. Վրաց լեզու եւ գրականություն
2. Օտար լեզու
3. Մաթեմատիկա/Պատմություն:

Երրորդ քննությունը կախված է ծրագրից: Տեխնիկական եւ բնագիտական ուղղություններով դիմորդները քննություն կհանձնեն մաթեմատիկայից, հումանիտար ուղղություններով՝ պատմությունից:

ԲՈՒՀ-երը (ընտրության համաձայն) արդեն որոշել են կրթական ծրագրերի համաձայն հավանական լրացուցիչ քննական առարկաները, որոնք են՝ Կենսաբանություն, Քիմիա, Ընդհանուր ունակություններ, Աշխարհագրություն, Գրականություն, Արվեստ եւ Քաղաքացիական կրթություն:

Բժշկական կրթական հաստատություններ ընդունվելու համար պարտադիր կլինի հանձնել 4 քննություն.

1. Վրաց լեզու եւ գրականություն
2. Օտար լեզու
3. Կենսաբանություն
4. Մաթեմատիկա/Քիմիա/Ֆիզիկա (դիմորդը ընտրում է 3-ից գոնե մեկը):

Ինչ վերաբերում է Վրաց լեզվի նախապատրաստական ծրագրին («1+4» ծրագիր), ընդունելությունները կշարունակվեն առկա ձեւաչափով, այսինքն՝ այստեղ փոփոխություն չի սպասվում:

Վրաստանում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ԲՈՒՀ ընդունվելու համար պետք է հանձնեն միայն Ընդհանուր ունակությունների քննությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿՀԱՆՁՆԵՆ ՄԻԱՅՆ ՈՐՈՇ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐ ԸՆԴՈՒՆՎՈՂՆԵՐԸ

Վրաստանի համալսարանների հավատարմագրված 541 ֆակուլտետից, այս պահի դրությամբ, միայն 9-ն են Ընդհանուր ունակություններ քննառարկան անցկացնելու որոշում կայացրել:

Դրանք են՝

1. Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարան՝ Միջազգային հարաբերություններ
2. Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարան՝ Իրավագիտություն
3. Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարան՝ Միջազգային իրավագիտություն
4. Իլիայի պետական համալսարան՝ Իրավագիտություն
5. Վրաստանի համալսարան՝ Բիզնես-կառավարում
6. Վրաստանի համալսարան՝ Բիզնես կառավարում (անգլերենի ծրագիր)
7. Վրաստանի համալսարան՝ Տնտեսագիտություն
8. Վրաստանի համալսարան՝ Պետական կառավարում,
9. Վրաստանի համալսարան՝ Տուրիզմ:

Նշենք, որ 2020 թվականից դիմորդները Միասնական ազգային քննությունները նոր մոդելով կհանձնեն, ինչը ենթադրում է, որ նրանք պարտադիր պետք է հանձնեն ընդամենը երեք առարկա՝ վրաց լեզու եւ գրականություն, օտար լեզու, մաթեմատիկա/պատմություն:

ՄԵՐ ՇՐՋԱՊԱՏԻ ՄԱՐԴԻԿ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ... ՄԻ ՈՂՋ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Կան մարդիկ, ում կենսագրությունը մի ողջ տարեգրություն է, ըստ որում, ոչ միայն անձնական, այլեւ հանուն ընդհանուր շահի եւ այս պարագայում հայրենի օրրանի՝ Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փոքր Խանչալի գյուղի: Այս տարի իր 75-ամյակը նշող Համլետ Վարդանյանը հենց այդ երախտավորներից է: Նմանների պատմությունը օրինակ է բոլորի, իսկ մեծարումը՝ խոնարհում նրանց համար, ովքեր ծնվում, սնվում եւ ապա ծառայում են նույն հողում, հողից եւ հողին:



Ահավոր դժվարությունների մի ողջ ճանապարհ է կտրել Համլետի հայրը՝ Վաղինակը: Հեշտ չէր իր պատանեկան վտիտ ուսերին կրել մոր եւ հինգ քրոջ հարաճուն հոգսերը՝ դիմակայելով պատերազմին: Հետո դժվարությունները կամաց-կամաց նահանջել են, ամուսնացել է, ընտանիք կազմել, հեռակա կարգով բարձրագույն կրթություն ստացել եւ, որպես ոսկեղենիկ հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ, համալրել հայրենի Փոքր Խանչալիի դպրոցի մանկավարժների շարքերը, սերունդներ դաստիարակել:

Վարդանյանների հարկի տակ ծնվել են երկու աղջիկ եւ երկու տղա: Ընտանիքի առաջին երեխան Անժելան էր, Համլետը ընտանիքի երկրորդ զավակն էր:

Համլետի մանկությունն էլ հեշտ չի անցել: Միջնակարգում, սովորելուն զուգընթաց աշխատել է կոլտնտեսությունում, կատարել զանազան աշխատանքներ, մանավանդ ամռան եւ աշնան ամիսներին:

Միջնակարգն ավարտելուց հետո՝ 1964-67 թվականներին ծառայեց խորհրդային բանակում եւ գովասանագրերով տուն դարձավ: Զորացրվելուց հետո ընդունվեց եւ հաջողությամբ ավարտեց Մոսկվայի առեւտրի ինստիտուտի Կույբիշեւի (այժմ՝ Սամարա) մասնաճյուղի ապրանքագիտության ֆակուլտետը՝ ստանալով ապրանքագետ-էկոնոմիստի որակավորում: Բուհն ավարտելուց հետո Համլետը վերադարձավ հայրենի գյուղ եւ որպես փորձագետ գործի անցավ Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա) շրջսպառմիությունում: Ապա նշանակվեց գյուղկոոպի առեւտրի բաժնի վարիչ, 1976 թվականին՝ հասարակական սննդի միավորման տնօրեն, հետո՝ ընտրվեց Բոգդանովկայի գյուղկոոպի վարչության նախագահ, իսկ 1992-1996 թվականներին՝ Բոգդանովկայի շրջկոոպի վարչության նախագահ... Հեշտ չէր առեւտրական այդ կազմակերպության ղեկավարումը, երբ տիրում էր խառն ու անորոշ իրավիճակը, ապրանքների դեֆիցիտը, մանավանդ սննդամթերքի: Այդ ընդհանուր քաոսից Համլետ Վարդանյանը պատվով դուրս եկավ, գործը գլուխ հանեց ինչպես պետքն էր, չկորցնելով մարդկային կերպն ու նկարագիրը:

Այդ տարիներին էր, որ հայրենի Փոքր Խանչալիի արդեն քայքայված կոլտնտեսությունը վերածվեց նոր տնտեսական միավորման, նոր կոոպերատիվի, որի առաջին եւ վերջին նախագահը դարձավ Համլետ Վարդանյանը: Նրա անձնուրաց աշխատանքի շնորհիվ հաջողությամբ պսակվեց հողերի սեփականաշնորհման խնդիրը:

Այս ամենով հանդերձ, բարեգործական աշխատանքները մշտապես եղել են Համլետ Վարդանյանի գործունեության տեսադաշտում: Նրա ակտիվ միջամտությամբ ավարտին է հասցվել գյուղի հարսանյաց տան կիսատ շինարարությունը, մասնակցել է տեղի եկեղեցու ցանկապատի վերջնական վերականգնմանը, տանիքի նորոգմանը, դարպասի տեղադրմանը եւ եկեղեցու ներսի վերանորոգմանը, ձմռան շրջանում պարբերաբար օգնել է դպրոցին վառելիքով: Թվարկումը կարելի է շարունակել... որովհետեւ գյուղին օգնության ցուցաբերումը շարունակվում է առ այսօր:

Համլետ եւ Օֆելյա Վարդանյանների հարկի տակ ծնվել, հասակ առել եւ բարձրագույն կրթություն են ստացել երեք զավակներ՝ Բագրատը մենեջեր է, Նարինեն՝ ուսուցչուհի, Սոֆյան՝ բժիշկ: Համլետի ութ թոռները եւս բարձրագույն կրթությամբ մասնագետներ են՝ Օֆելյան եւ Աղունիկը ավարտել են Մոսկվայի Սեչենովի անվան բժշկական ինստիտուտը, Համլետի թոռը՝ Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետհամալսարանը, Նազելին՝ նույնպես Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտը...

Մնում է ծնողի ու պապիկի՝ Համլետ Վարդանյանի ծննդյան 75-ամյակի առթիվ ջերմորեն շնորհավորել եւ բարեմաղթել քաջառողջություն, երջանկություն, երկար տարիների կյանք:

ՄԻՔԱՅԵԼ ԵՍՈՅԱՆ

Նինոծմինդա

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՔԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԱՆԲԱՎԱՐԱՐ ՔՈՒՆԸ՝ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Այն, որ անբավարար քունը բացասաբար է անդրադառնում մարդու օրգանիզմի վրա, հայտնի փաստ է, թեև կոնկրետ ինչո՞վ է դա արտահայտվում, շատերի համար այդքան էլ հայտնի չէ: Գուցե պարզաբանեի՞ք:

Վ.Մուրադյան

Բաթումի

Իրականում անբավարար քունը շատ հիվանդությունների նախադրյալն է: Մասնավորապես, ԱՄՆ-ի եւ Իսպանիայի գիտնականները եկել են այն եզրակացության, որ օրական վեց ժամից պակաս քնող մարդիկ սիրտ-անոթային հիվանդությունների մեծ ռիսկի են ենթարկվում՝ ի տարբերություն այն մարդկանց, ովքեր քնում են 7-8 ժամ:

Հետազոտությանը մասնակցել են 3 հազար 974 իսպանացիներ, ովքեր գիտափորձի ընթացքում կրել են ակտիգրաֆ՝ սարք, որը չափում է քնի եւ արթուն լինելու ժամանակի տեւողությունը: Կամավորներին բաժանել են չորս խմբի՝ կախված այն ժամանակից, որը հատկացվում է գիշերային հանգստին:

Բացի այդ, գիտափորձի մասնակիցները էխոկարդիոգրաֆիա եւ համակարգչային տոմոգրաֆիա են անցել հիվանդությունների բացահայտման համար:

Պարզվել է, որ այն մարդկանց մոտ, որոնք վեց ժամից պակաս են քնել, աթերոսկլերոզի զարգացման հավանականությունը 27 տոկոսով բարձր է եղել նրանց համեմատ, ովքեր քնելուն հատկացրել են 7-8 ժամ: Բացի այդ, անհանգիստ քունը եւ գիշերային հաճախակի արթնացումները անոթային հիվանդությունների վտանգը մեծացրել են 34 տոկոսով: Սակայն չափազանց տեւական քունը, որը գերազանցում է օրական ութ ժամը, նույնպես կարող է նպաստել աթերոսկլերոզին: Ուշագրավ է, որ նրանք, ովքեր քիչ են քնում, հաճախակի են օգտագործում սուրճ եւ ալկոհոլ: Գիտնականները կարծում են, որ սուրճի վնասը կարող է բացատրվել մարդկանց մի մասի մոտ դրա դանդաղ յուրացմամբ:

ԱՀԱՍԱՆԳ

ԱՂԲԱՇԵՆ ԿՂԶԻ՞, ԹԵ՞ ԱՂԲԱՅԻՆ ՄԱՅՐՑԱՄԱՔ

Վերջին ժամանակներում շատ են խոսում ու գրում համաշխարհային օվկիանոսի աղտոտման մասին: Որքանո՞վ է նման պնդումը իրատեսական, եւ ի՞նչ վտանգ է այն պարունակում:

Գ.Սարգսյան

Թբիլիսի

Ցավոք, նման պնդումը բավական իրատեսական է: Դեռեւս 1988թ. կանխատեսումներ էին արվում Խաղաղ օվկիանոսում աղբից առաջացած մեծ կուտակման մասին: Ապացուցվել էր, որ օվկիանոսյան հոսանքները աղբը քշում եւ հավաքում են 136-155 աստիճան արեւմտյան երկարության եւ 35-42 աստիճան հյուսիսային լայնության միջակայքում տեղակայված որոշակի հատվածում, որը նաեւ անվանում են Արեւելյան աղբային մայրցամաք: Այն ունի 2200 կմ երկարություն, 800 կմ լայնություն եւ 10 մետր խորություն, իսկ գրաված մակերեսը 3 անգամ ավելի մեծ է, քան Իսպանիայի եւ Պորտուգալիայի տարածքները միասին վերցրած: Աղբի 80 տոկոսն այստեղ է հասնում հենց ցամաքից, իսկ զբոսաշրջային եւ ձկնորսական նավերից նետված աղբը կազմում է միայն 20 տոկոսը: Խաղաղօվկիանոսյան այս վիթխարի աղբաշեն կղզին հիմնականում կազմված է պլաստիկից եւ տեխնոլոգիական քաղաքակրթության այլ թափոններից:

Սակայն իրականում, աղբի այս հավաքատեղին ընդամենը մի մեծ բիծ է, այլ ոչ թե կղզի, քանի որ պլաստիկը չնայած չի քայքայվում, բայց մասնատվում է շատ մանր կտորների, եւ ամբողջական կարծրացած կույտ այստեղ չի գոյանում: Այնպես որ, «աղբակղզին» միայն գունային նրբերանգով է զատվում եւ տիեզերքից նույնիսկ չի էլ նշմարվում:

Ձկներն ուտում են պլաստիկի մանր կտորները, որոնց մի մասը դուրս է գալիս նրանց օրգանիզմից բնական ճանապարհով, իսկ դուրս չեկած մասը ձկնային ուտեստների հետ հայտնվում է մեր սեղաններին:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ԱՅՆ, ԻՆՉ ԵՐԵԽԱՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՍՏԱՆՈՒՄ Է ՀՈՐԻՑ ՈՒ ՄՈՐԻՑ

20-րդ դարի ամենամեծ հայտնագործությունը՝ գենը, հնարավորություն տվեց ախտորոշել, թե ինչ կամ որքան է ժառանգել երեխան հորից կամ մորից: Ըստ որում, առանձնացվեց գենետիկ շարք, որը երեխաներին փոխանցվում է հենց հայրերից:

Ստորեւ ներկայացնում ենք այն 7 «բաղադրիչները», որոնք երեխաները, ամենայն հավանականությամբ, ժառանգում են հենց հայրերից:

1. Սիրտ-անոթային հիվանդություններ

Գենը, որը 50% մեծացնում է սրտի իշեմիկ հիվանդությունների զարգացման վտանգը, փոխանցվում է արական գծով:

Համարվում է, որ այդ գենը բերում է բորբոքումները կառավարելու ունակության խախտումների, ինչը վճռորոշ նշանակություն ունի զարկերակի թուլության զարգացման կանխարգելման վրա:

2. Հոգեկան առողջության գենետիկա

Չնայած երկու ծնողն էլ կարող են երեխային փոխանցել հոգեկան խանգարումներ, շիզոֆրենիան ամենամեծ հավանականությամբ փոխանցվում է հորից որդուն, եթե հայրը երեխայի բեղմնավորման ժամանակ եղել է մեծ տարիքում:

3. Ժպիտ

Եթե հայրը ատամների հետ կապված պրոբլեմներ է ունեցել, ապա երեխաների մոտ նույնպես դա կլինի: Գենները հորից, որպես օրենք, ավելի ակտիվ են, քան նույն գենը մորից:

Սակայն ատամների չափսերը, ծնոտը եւ ատամների ձեւը կարող են ժառանգվել յուրաքանչյուր ծնողից:

4. Սերունդների շարունակություն

Տղամարդիկ, որոնց մոտ սերմնահեղուկի ցածր որակ է, կարող են օգտագործել բեղմնավորող in vitro: Սակայն հետազոտությունները, որոնք կապված են էքստրակորպորալ բեղմնավորման հետ, ցույց են տալիս, որ պրոբլեմներով հայրերը կարող են փոխանցել անպտղության ռիսկը որդիներին:

5. Երեխայի սեռը

Հոր տոհմածառը կարելի է օգտագործել, որպեսզի պարզել հավանականությունը՝ զույգերի մոտ աղջիկ կծնվի՞, թե՞ տղա: Սակայն դեռեւս գիտնականներին չի հաջողվել պարզել, թե ո՞ր գենն է պատասխանատու, ո՞ր X եւ Y քրոմոսոմներն են բաշխվում ըստ հոր կենսանյութի:

6. Աչքեր

Ավելի բաց գույները, այնպիսիք, ինչպիսիք են կապույտը եւ կանաչը, կախված են ռեցեսիվ գեներից, իսկ շագանակագույն աչքերը՝ գերակայող գեներից:

Եթե երկու ծնողների մոտ էլ բաց գույնի աչքեր են, ապա երեխան էլ կունենա բաց գույնի աչքեր: Բայց եթե ծնողներից թեկուզ մեկի մոտ մուգ աչքեր են՝ 75% հավանականությամբ երեխան էլ կունենա մուգ աչքեր:

7. Հասակ

Հիմնականում երեխաները ժառանգում են հոր հասակը: Սակայն գիտությունը դեռեւս ուսումնասիրում է հասակի ժառանգականության հարցերը:

Բժիշկներն ասում են, որ եթե դուք ունեք որոշ մտահոգություններ՝ կապված հորից եւ մորից երեխային տարբեր հիվանդությունների ժառանգաբար փոխանցման հետ, անպայման խորհրդակցեք գենետիկների հետ:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

ԱՎՍՏՐԻԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ԱՄԵՆԱՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԿԻՐՆ Է

Ավստրիայում ավտոմոբիլային վթարի ենթարկվելու հավանականությունն ինն անգամ ավելի մեծ է, քան Դանիայում:

Ավստրիայում 10 հազար բնակչին բաժին է ընկնում 44 վթար, իսկ Դանիայում՝ ընդամենը՝ հինգ, ինչի մասին վկայում են պատահարների գծով եվրոպական հանձնաժողովի տարեկան հաշվետվության տվյալները: Նաեւ բավական վտանգավոր են ուղեւորությունները Գերմանիայով (37 վթար) եւ Բելգիայով (35):

Միայն փոքր-ինչ ավելի լավ են Սլովենիայի, Պորտուգալիայի, Մալթայի եւ Իտալիայի ցուցանիշները. այնտեղ վթարների թվաքանակը 10 հազար բնակչի հաշվով կազմում է մոտավորապես 30:

Ավտոսիրողների համար ամենաանվտանգ երկրներ են ճանաչվել Կիպրոսը (10 հազար բնակչին՝ 7,5 ավտոպատահար) եւ Ֆինլանդիան (8,5):

Մեծ Բրիտանիան ցուցակում զբաղեցրել է 19-րդ տեղը, այնտեղ 10 հազար բնակչի հաշվով գրանցվել է 22 դժբախտ դեպք:

Վթարների ռիսկը նվազեցնելու համար, փորձագետները խորհուրդ են տալիս ավելի լավ ուսումնասիրել ճանապարհային երթեւեկության կանոնները եւ նվազագույնի հասցնել շեղող գործոնների ազդեցությունը ճանապարհին:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Մարդու համար անունն ավելի թանկ է, քան կյանքը, եւ դրա համար էլ մարդ պիտի աշխատի նախ իր անվան, ապա՝ կյանքի համար:

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ
(1825-1912)
Հայ դրամատուրգ

Ճի՞շտ է, արդյոք, որ մարդն ապրի եւ ոչինչ չանի աշխարհի համար:

ՆԻԿՈԼՈՂ ԲԱՐԱԹԱՇՎԻԼԻ
(1817-1845)

Վրաց բանաստեղծ

Ամենադեմոկրատական ուսմունքներից առաջինն այն է, որ բոլոր մարդիկ հետաքրքիր են:

Հ.ՉԵՍՏԵՐՏՈՆ
(1874-1936)
Անգլիացի գրող

Մարդուն ճանաչելու համար պետք է նրան սիրել:

Լ.ՖՈՅԵՐԲԱԽ
(1804-1872)
Գերմանացի փիլիսոփա

Մարդու մասին չի կարելի դատել առաջին հայացքից. արժանիքները սովորաբար պատված են համեստության քողով, թերությունները քողարկված են կեղծավորության դիմակով:

Ժ.ԼԱԲՐՅՈՒԵՐ
(1645-1696)
Ֆրանսիացի հայտնի բարոյախոս

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ծրագրի շրջանակներում հիմնականում սփյուռքահայ մասնագետները կհրավիրվեն եւ կաշխատեն Հայաստանի պետական մարմիններում՝ ոլորտային հետազոտությունների, ուսումնասիրությունների կատարման, համապատասխան առաջնային ծրագրերի, ռազմավարությունների մշակման եւ իրականացման ուղղությամբ: Ծրագրին կարող են դիմել սփյուռքահայ այն մասնագետները, որոնք ունեն մագիստրոսի կամ ավելի բարձր աստիճան:

Ծրագիրը մեկնարկելու է 2020թ. հուլիսի 1-ից եւ տեւելու է 12 ամիս: Ծրագրի իրականացման ծախսերը մասնակիցների համար կապահովի Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը, մասնավորապես՝ ավիատոմս (դեպի Հայաստան եւ հակառակ ուղղությամբ), կացարան:

Մասնագետներին ընտրելու ընթացակարգը կիրականացվի երկու փուլով: Առաջին փուլով կամփոփվեն բոլոր դիմումները եւ հաջորդ փուլ կանցնեն միայն այն դիմումները, որոնք համապատասխանում են ծրագրի պահանջներին: Երկրորդ փուլով կընտրվեն ծրագրի մասնակիցները եւ նրանց վերջնական ընտրությունը կկատարվի հարցազրույցի միջոցով:

Ծրագրի վերաբերյալ հայտարարությունը Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարը կտարածի առաջիկայում:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱԿՆԿԱԼՎՈՒՄ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Հայաստանի էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանի խոսքով, Հայաստանը 2019-ի տարեկան արդյունքներով կունենա առնվազն 7,5 տոկոս տնտեսական աճ:

- Շատ լավ տարի ենք սկսել, քանի որ այն կառուցված է 2019-ի շատ լավ հիմքի վրա: Նախորդ տարվա 11 ամիսների տվյալներով՝ 7,5 տոկոս տնտեսական ակտիվության ցուցանիշ ունենք: Առաջատար նշանակություն ունի հատկապես արդյունաբերության աճը: Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը 11 ամսում կազմել է 9,3 տոկոս: Ծառայություններն աճել են գրեթե 15 տոկոսով: Ներքին առեւտրաշրջանառությունն ունեցել է 9,2 տոկոս աճ, շինարարությունը 4,5 տոկոս, իսկ արտահանումն աճել է 9 տոկոսով: Սա նշանակում է, որ, չնայած տարեկան համախառն ներքին արդյունքի, ցուցանիշները դեռեւս ամփոփված չեն, բայց արդեն կարող ենք ասել, որ կունենանք առնվազն 7,5 տոկոս տնտեսական աճ,- ասաց Խաչատրյանը:

Նա սա չափազանց կարեւոր ձեռքբերում համարեց վերջին 1,5 տարվա աշխատանքների ամփոփման արդյունքում:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԻ ԿԱԼԱՆՔԻ ԴԵՄ ԲՈՂՈՔԸ ՉԻ ԲԱՎԱՐԱՐՎԵԼ

Հայաստանի դատախազությունը մերժել է Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի գույքի վրա կալանք դնելու որոշման դեմ պաշտպան Ամրամ Մակինյանի բողոքը:

Ավելի վաղ Հատուկ քննչական ծառայությունը Սերժ Սարգսյանի գույքի վրա՝ ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասի չափով կալանք էր դրել, որը բողոքարկվել էր նրա պաշտպան Ամրամ Մակինյանի կողմից:

Հատուկ քննչական ծառայությունն ավարտել էր Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի գործով նախաքննությունը: Քրեական գործով կա եւս 4 մեղադրյալ, այդ թվում՝ «Ֆլեշ» ընկերության սեփականատեր Բարսեղ Բեգլարյանը:

Դեկտեմբերի 4-ին Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին մեղադրանք էր առաջադրվել քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով եւ որպես խափանման միջոց ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Ըստ ՀՔԾ-ի հաղորդագրության՝ Սարգսյանը, զբաղեցնելով ՀՀ նախագահի պաշտոնը, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, 2013 թվականին կազմակերպել է պաշտոնատար մի խումբ անձանց կողմից պետությունից վատնելու եղանակով առանձնապես խոշոր չափերով գումարի՝ 489.160.310 ՀՀ դրամի հափշտակության կատարումը:

ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

Երկրապահ կամավորների միության նախկին նախագահ Մանվել Գրիգորյանի խափանման միջոց կալանքը փոխվեց: Նա դատարանի որոշմամբ ստորագրությամբ ազատ արձակվեց՝ երկրից չհեռանալու պայմանով:

Հայաստանի դատախազության նախաձեռնությամբ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում հունվարի 15-ին, ԵԿՄ վարչության նախկին նախագահ, գեներալ Մանվել Գրիգորյանի խափանման միջոցի փոփոխման վերաբերյալ արտահերթ դատական նիստ էր հրավիրվել:

Նիստին ներկայացվեց միջգերատեսչական փորձագիտական հանձնաժողովի եզրակացությունը, ըստ որի Գրիգորյանի առողջական վիճակը ծանր է, եւ նրա կալանքը համատեղելի չէ առողջական վիճակի հետ: Դատախազությունը միջնորդեց՝ հաշվի առնելով Գրիգորյանի առողջական վիճակի վերաբերյալ գրությունը, նրա խափանման միջոց կալանքը փոխել:

Հիշեցնենք, որ Մանվել Գրիգորյանը մեղադրվում է ապօրինի զենք-զինամթերք պահելու, ավելի քան 101 միլիոն դրամի գույք յուրացնելու, ավելի քան 1 միլիարդ դրամի հարկերի վճարումից խուսափելու, պետական միջոցներից ավելի քան 1 միլիարդ դրամ վատնելու եւ շորթմամբ 37 միլիոն դրամ արժողությամբ գույքի հափշտակությունը կազմակերպելու մեջ:

ԲԱԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ՝ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՆԻՇՆԵՐՈՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ՄԻԱՅՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

Հունվարի 1-ից Հայաստանում ուժի մեջ են մտել տեսանկարահանող սարքերի եւ արագաչափերի կողմից արձանագրված խախտումների մասին դրույթները:

Ըստ նոր օրենքի՝ յուրաքանչյուր վարորդի տրվում է 9 բալ, որոնք ներառում են սահմանված ճանապարհային երթեւեկության խախտումների գրեթե քառորդ մասը: Եթե վարորդը մեկ տարում սպառի բոլոր բալերը, ապա նրան կզրկեն վարորդական իրավունքից կես տարով՝ 3 ամիսը լրանալուց հետո տեսական քննություն հանձնելու եւ վարորդական իրավունքը վերականգնելու իրավունքով: Եթե վարորդը չի օգտվում այդ իրավունքից, իրավունքն ավտոմատ կերպով վերականգնվում է վարորդական իրավունքից զրկելուց հետո կես տարի անց: Ապա վարորդին տրվում է եւս 9 բալ: Եթե նա դրանք կրկին սպառում է մեկ տարում, ապա վարորդական իրավունքն այս անգամ վարորդի ձեռքից վերցնում են, եւ վարորդը ստիպված է լինում մեկ տարի անց՝ հանձնել տեսական եւ գործնական քննություններ: Ինչպես նաեւ նախատեսվում է մեկ այլ հնարավորություն, եթե բալերը սպառվում են, ապա կարելի է քննություն հանձնել եւ մի քանի նոր բալ ստանալ:

Որոշ խախտումների դեպքում նախատեսված է միանշանակ պատժամիջոց մեկ տարով իրավունքի զրկման տեսքով: Նման խախտումների թվում են ոստիկանության, շտապ օգնության լուսաձայնային ազդանշանների անօրինական օգտագործումը, առանց համարանիշների կամ կեղծ համարանիշներով վարելը, արագության գերազանցումը 81 եւ ավելի կմ/ժ:

Վարորդը 4 բալ է կորցնում 51-80 կմ/ժ արագությունը գերազանցելու, հարբած վարելու համար, 3 բալ համարանիշների չքույլատրված փոխանցման, միակողմանի ճանապարհով հանդիպակաց ուղեմասով երթեւեկության, 31-50 կմ/ժ արագության գերազանցման համար: Վարորդը 2 բալ է կորցնում համարների հետ կապված խորամանկությունների համար, նույնիսկ եթե ծածկված լինի համարի թեկուզ մեկ թիվը:

Վարորդները մեկական բալ են կորցնում բաժանարար գծերի խախտումների, սխալ շրջադարձերի եւ հետ շրջվելու, խաչմերուկով, հետիոտնային անցումներով երթեւեկելու կանոնների խախտումների, վազանցման, վարելու ժամանակ ծխելու դեպքում, ընդ որում՝ տուգանքը 7-20 հազար դրամ է կախված այն հանգամանքից՝ խոսքը մարդատար մեքենայի, թե՞ հասարակական տրանսպորտի վարորդների մասին է, անվտանգության ամրագոտիները չկապելու, հեռախոսով խոսելու դեպքում: Վարորդը կես բալ կորցնում է ոչ ստանդարտ կամ մաշված համարանիշներ օգտագործելու, կանգառների եւ կայանման կանոնների խախտումների համար:

Անձը յուրաքանչյուր դեպքում իրազեկվելու է վարչական տուգանքի մասին եւ ինքնուրույն կարող է հաշվել իր բալերը: Եթե 2 բալի առկայությամբ վարորդը կատարել է 4 բալի խախտում, 2-ը չի փոխանցվում հաջորդ տարի:

Նշենք, որ Վրաստանի համարանիշով մեքենաների դեպքում, վերոնշյալ խախտումների համար սահմանված են դրամական տուգանքներ:

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է ԱՆՕՐԵՆ ԳԱՂՏՆԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ

Հունվարի 17-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին քննչական կոմիտե հարցաքննության էին կանչել անօրեն գաղտնալսումների գործով:

Քննչական կոմիտեի առանձնահատուկ գործերի քննության գլխավոր վարչությունը հետաքննում է 2018թ. սեպտեմբերին եւ դեկտեմբերին համայանցում տարածված հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումների գործը:

Մամուլի տեղեկությամբ, հեռախոսազրույցին մասնակցում էին վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանը եւ Հայաստանի հատուկ քննչական ծառայության պետ Սասուն Խաչատրյանը եւ քննարկում դատավորների գործունեությանը հնարավոր միջամտելու հարցը:

ԷՐԴՈՂԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՊՈԼՍՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Հունվարի 15-ին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիբ Էրդողանը նախագահական նստավայրում ընդունել է Պոլսո Հայոց պատրիարք Սահակ եպիսկոպոս Մաշալյանին:

Հանդիպումը լրատվամիջոցների համար փակ էր:

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեւլութ Չավուշօղլուն եւս հյուրընկալել է Սահակ եպիսկոպոս Մաշալյանին: Նա շնորհավորել է Մաշալյանին 85-րդ պատրիարք ընտրվելու կապակցությամբ:

Մեւլութ Չավուշօղլուն լավագույն մաղթանքներն է փոխանցել Թուրքիայի հայ համայնքին:

ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԱԱԾ-Ի ՆԱԽԿԻՆ ՏՆՕՐԵՆԻ ԴԻՆ

Հունվարի 17-ին Երեւանի Պարույր Սեւակի փողոցի բնակարաններից մեկում հայտնաբերվել էր ԱԱԾ նախկին տնօրեն Գեորգի Կուտոյանի դին՝ հրազենային վիրավորումով:

Գեորգի Կուտոյանը ծնվել է 1981 թվականին, Երեւանում: 2011թ. ՀՀ նախագահի կարգադրությամբ նշանակվել է Հայաստանի նախագահի օգնական: 2011-2014 թթ. զբաղեցրել է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին առընթեր հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողովի նախագահի պաշտոնը: 2016-2018 թթ. եղել է ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության տնօրենը:

ՄԱՅՐԱՔԱՂԱՆՔ

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ 80 ՆՈՐ ՄԵՔԵՆԱ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Թբիլիսիի քաղաքապետարանը Վրաստանի առողջապահության նախարարությանը փոխանցել է շտապ օգնության 80 նոր, եվրաչափանիշներին համապատասխան ավտոմեքենա:

Հունվարի 15-ին, Թբիլիսիի Ազատության հրապարակում ավտոմեքենաների հանձնման արարողությանը ներկա էին Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, առողջապահության նախարար էկատերինե Տիկարաձեն, արտակարգ իրավիճակների ղեկավար Ավթանդիլ Թալակվաձեն եւ հյուրեր:

Ինչպես նշվեց միջոցառմանը, նորացված ավտոմեքենաները կբարելավեն շտապ բուժօգնության սպասարկման որակը:

ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

ԲԱԿՈՒՐԻԱՆԻՆ՝ ՁՄԵՌԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ

Բակուրիանին ու Բորժոմին ստացան՝ Եվրոպայի 2025 թվականի ձմեռային երիտասարդական օլիմպիական փառատոնի հյուրընկալ քաղաքների թեկնածուի կարգավիճակ:

Այս մասին ասված է պաշտոնական նամակում, որը Վրաստանի օլիմպիական կոմիտեի նախագահ Լերի Խաբելովը ստացավ Եվրոպայի օլիմպիական կոմիտեի նախագահ Յանեզ Կոչիանչիչից եւ գլխավոր քարտուղար Ռաֆայել Պանիոցից:

2020 թվականի փետրվարին Բորժոմի ու Բակուրիանի են այցելելու փառատոնը գնահատող հանձնաժողովի անդամները:

Վրաստանի օլիմպիական կոմիտեն՝ Եվրոպայի օլիմպիական կոմիտեին հյուրընկալության վերաբերյալ անհրաժեշտ լրատվությունը պետք է ներկայացնի մինչեւ 2020 թվականի հուլիսի 31-ը:

ՓԱՐԱՋԱՆՈՎ - 96

ՓԱՐԱՋԱՆՈՎՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՆՈՐ ԴԱՓՆԵԿԻՐՆԵՐԸ

Սերգո Փարաջանովը՝ իր ծննդյան օրը Թբիլիսի, 1981թ., հունվարի 9-ը

Ինչպես արդեն հաղորդել ենք «Վրաստան» թերթի նախորդ համարում, հունվարի 15-ին, Թբիլիսիի «Կովկասյան տանը» տեղի ունեցավ Սերգո Փարաջանովի (1924-1990 թթ.) ծննդյան 96-ամյակին նվիրված հերթական՝ 6-րդ գեղանկարչական մրցույթը, որին մասնակցեցին տարբեր տարիքի ստեղծագործողներ ինչպես Թբիլիսիից ու Վրաստանի տարբեր շրջաններից, այնպես էլ՝ Հայաստանի Վանաձոր քաղաքից:

Ավանդական ամենամյա միջոցառումը նվիրված էր մեծանուն կինոռեժիսոր, նկարիչ, կոլաժիստ Սերգո Փարաջանովին: Մրցույթին ներկայացված էին դիմանկարներ, կոլաժներ, դիմակներ...

Առաջին տեղը նվաճեցին Հայաստանի Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության Ազգային Կենտրոնի Վանաձորի մասնաճյուղի սաներ, 11-ամյա **Գայանե Փանդունցը** եւ **Միլենա Սիմոնյանը,** ովքեր ներկայացրել էին Փարաջանովի դիմակները: **Երկրորդ տեղը** գրավեց թբիլիսցի նկարչուհի, կոլաժիստ **Նանա Զաքաիձեն**, իսկ **երրորդը**՝ Թբիլիսիի պետական բժշկական համալսարանի ուսանող, ախալքալաքցի **Սուրեն Վարդանյանը:** Հատուկ պարգեւի արժանացան Թբիլիսիի թիվ 107 հանրային դպրոցի աշակերտներ Նինո Չիքովանին եւ Նիկա Եղիազարյանը:

Հաղթողների մրցանակները հանձնեցին Վրաստանի հաշտեցման եւ իրավահավասարության հարցերով պետնախարարի տեղակալ Լիա Գիգաուրին, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, միջոցառման նախաձեռնող, «Վրացահայերի միություն» կազմակերպության ղեկավար Մարի Առաքելովան:

Լիա Գիգաուրին Գայանե Փանդունցին պատվոգիր հանձնելիս՝ հաղթանակած Դիմակի ֆոնին

ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, «Վրաստան» թերթի խմբագրությունը վշտակցում են դպրոցի տարրական դասարանների ուսուցչուհի Նանա (Եպրաքսյա) Բաղդասարյանին, սկեսրայրի՝

Ռոբերտ Սուրենի ԵՁԻԿՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Լեռ Հայաստանում: 5.Նահանգ ԱՄՆ-ում: 8.Նոր, ոչ հին: 10.Խմիչքի տեսակ: 12.Կատարել, շեշտել: 13.Գյումրի քաղաքի անվանումներից: 16.Գրական կարճ, իմաստալից ստեղծագործության տեսակ: 18.Պայտ, ձիու կոշիկը (բրբ.): 20.Գրական ստեղծագործություն: 24.Ֆրանսիացի հայտնի մոդելյոր ... Շանել: 25.Քաղաք Բուլղարիայում: 28.Գետ Եվրոպայում: 30.Ռոքի արքա ... Գիլան: 31.Երկարության չափման միավոր: 32.Հայկական ֆիլմ «... ճանաչում եմ»: 33.Պատերազմով գրավել, ուժով վերցնել: 35.Տղամարդ, նաեւ քարայր: 36.«..., մայրիկ ջան, տե՛ս, բակն ու դուռը լի» (Հովհ.Թումանյան): 37.Նախադասության գլխավոր անդամ: 40.Հին զենքի տեսակ: 42.Միանիշ թիվ: 43.Գրիգոր Լուսավորչի հայրը: 44.Ճապոնիայի դրամական միավորը: 45.Ներկա է, գոյություն ունի: 46.Հանրահռչակ կոմպոզիտոր ... Խաչատրյան: 50.«Զարկեցեք, դարբիններ, ...ը սալին» («Արտավազդ»): 52.Երեւանում լույս ընծայվող հայկական պարբերական: 53.Ամսանուն: 54.Ոչ ճիշտ, սխալ տեղեկություն, փչոց: 57.Քաջ, անվախ, խիզախ: 58.Միմոզա ծաղիկը հայեցի: 59.Լեռնագագաթ Պատմական Հայաստանում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Մրցասպարեզ կրկեսում: 3.Տատիկի թելատու գործիքը: 4.Վրաց շախմատիստուհի ... Չիբուրդանիձե: 5.Պարսիկ հանրաճանաչ գրող ... Խայյամ: 6.Խորհրդային հայտնի ֆուտբոլիստ, դարպասապահ: 7.Թանկարժեք քար: 9.Հայկական հին նվագարան: 11.Ցանկ, անունների հերթական դասավորություն: 14.Արգոնավորդների ղեկավարը: 15.Քաղաք Հայաստանում: 17.Հայ բեմարվեստի աստղ, Ախալցիխեում ծնված դերասան Խաչվանքյանի անունը: 19.Ե՛վ քաղաք, ե՛ւ լիճ, ե՛ւ գավառ Արեւմտյան Հայաստանում: 21.Ավտոմեքենայի մակնիշ Ռոլս ...: 22.Պատահական, միամիտ ձեւով, հանկարծ: 23.Իտալական հայտնի օպերան՝ ... Սկալա: 29.Քաղաք Ռուսաստանում: 27.Ոչ բնական, հնարովի: 28.Պատմական մարզ Ուկրաինայում: 29.Չոր, անանձրեւ եղանակ: 32.Հայկական անապակ գինի: 34.Միջատի տեսակ: 38.Ոչ էժան, բարձր գին ունեցող: 39.Գեղեցիկ ծաղիկ: 41.Հայ երգահան, երաժշտագետ Դանիել ...: 47.... ու դովլաթ (բրբ.): 48.Թիքա, կտոր: 49.Որդի, երեխա: 51.Հայերենի խոսքի մաս: 54.Կիլիկիայի Հայկական թագավորության մայրաքաղաքը: 55.Փոքրիկ արկղ: 56.Աշակերտ, մոնք:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ N 101-102 ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Վայրէջք: 9.Համով: 10.Նունե: 11.Տասնյոթ: 13.Ղուկաս: 16.Տղա: 17.Ղեկ: 19.Վադուց: 22.Գաճաճ: 24.Վեներա: 25.Ռիսկ: 27.Թելատու: 29.Մակույկ: 32.Նյասա: 33.Մանկիկ: 35.Յարա: 38.Լիա: 40.Օֆսեթ: 41.Բլից: 44.Աբիգ: 47.Վուր: 48.Մղոն: 50.Ատելի: 51.Երե: 52.Գե: 53.Նալ: 54.Ճալ: 55.Ամիս:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Խառատ: 2.Իրինա: 3.Իջնող: 4.Ահեղ: 5.Ամոկ: 6.Կվաս: 8.Քութեշ: 12.Սղաճ: 14.Ուլան: 15.Ամուր: 18.Վճիտ: 19.Վեգաս: 20.Դեկու: 21.Ցանկ: 23.Առարկա: 26.Սունկ: 28.Եռալ: 29.Մաղ: 30.Կայֆ: 31.Յուրե: 34.Նիկիտա: 36.Աստղ: 37.Աթանես: 39.Ջիու: 42.Լվիճ: 43.Ցրել: 45.Բան: 46.Գել: 48.Մեա: 49.Ոգի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445